

ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈՆՈՒՄԻ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԼԵՂՎԱՐԱՆԻՆ

1970 թ. հոկտեմբերի 16-ին ՀՍՍՀ ԳԱՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հանդիսավորությամբ նշեց վաստակաշատ գիտնական, բանասիրական գիտությունների դոկտոր Վարազ Դավթի Առաքելյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակը: Լեզվի ինստիտուտի դիրեկտոր ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, պրոֆ. Գ. Բ. Զառուկյանը, բաց անելով հոբելյանական երեկոն և բնութագրելով Վ. Առաքելյանի գիտական գործունեությունը, ասաց.

—Մեր այսօրվա հոբելյարը ամենից առաջ աչքի է ընկնում բանասիրական իր լայն հետաքրքրություններով. նա հավասարապես զբաղվել և զբաղվում է ինչպես դասական հայերենով ու հայոց լեզվի պատմությամբ, այնպես էլ ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի քննությամբ, ոճաբանությամբ, բառագիտությամբ ու բառարանագրությամբ: Վ. Առաքելյանը նաև հայ մատենագրության մեզանում ճանաչված մասնագետներից մեկն է: Առանձնապես կարևոր է այն աշխատանքը, որ նա կատարում է մատենագրական երկերի աշխարհաբար թարգմանության և հրատարակության գործում:

Հոբելյարի կյանքի և գիտական գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Է. Բ. Աղայանը:

Վ. Առաքելյանը ծնվել է 1910 թ. հոկտեմբերի 1-ին Կոտայքի շրջանի Եղդվան գյուղում: Սկզբնական կրթությունը ստանալով հայրենի գյուղում, այնուհետև նա տեղափոխվում է Երևան և ուսումը շարունակում Մյասնիկյանի անվան դպրոցում: Միջնակարգն ավարտելուց հետո շուրջ երկու տարի զբաղվում է ուսուցչությամբ: Ուսման ծարավը, սակայն, նրան

տանում է Երևանի պետական համալսարան: Ընդունվում է բանասիրական ֆակուլտետ (1933—1935), աշակերտում է



մեծ հայագետներ Աճառյանին ու Ղափանցյանին: Այնուհետև նա ընդունվում է ասպիրանտուրա, մասնագիտանում գրաբարի և հայոց լեզվի պատմության մեջ՝ ուսումնառությանը զուգընթաց Երևանի պետական համալսարանում կատարելով նաև դասախոսական աշխատանք: Ասպիրանտուրան ավարտում է հաջողությամբ, պաշտպանում դիսերտացիա և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Մոտավորապես մեկ և կես տասնամյակ նա գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, ժամանակակից հայոց լեզու և լեզվագիտական այլ առարկաներ է դասավանդել մեր հանրապետության տարբեր բուհերում՝ Երևանի համալսարանում (1939—1948), Խ. Լ. Խովյանի անվան մանկավարժական ինս-

ստիտուտում (1944—1945), հեռակա մանկավարժական ինստիտուտում (1943—1951): 1948 թվականից՝ Վ. Առաքելյանը աշխատանքի է անցնում ՀՍՍՀ ԳՍՀ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում, որտեղ ամեն ծավալ են ստանում նրա հայերենագիտական ուսումնասիրությունները: 1960 թ. «Հայերենի շարահյուսություն» աշխատության ատաղձն հատորի համար նրան շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Վ. Առաքելյանը 1959 թ. հաջողությամբ դեկավրում է լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության և բարոառագիտության բաժինը՝ իր հարուստ փորձն ու գիտելիքները հաղորդելով երիտասարդ հայերենագետներին:

Նշանակալից է Վ. Առաքելյանի դերը ժամանակակից հայերենի ուսումնասիրության գործում, — շարունակում է զեկուցողը: Հայ լեզվաբանական գրականությունը նա հարստացրեց մի շարք արժեքավոր հետազոտություններով, ինչպես՝ «Ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը» (1955), «Ժամանակակից հայերենի ուղղվածների ու հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957), «Հայերենի շարահյուսությունը» (2 հատոր, 1958—1964), «Հայերենի պարբերությունը» (1967) և այլն: Հստակապես պետք է հիշատակել «Հայերենի շարահյուսությունը» երկհատոր մենագրությունը, որի մեջ հանգամանորեն քննված են արդի հայերենի պարզ նախադասությունն իր տեսակներով, պարզ նախադասության գլխավոր և երկրորդական անդամների խմբերն ու դրանց կիրառական-ֆունկցիոնալ առանձնահատկությունները, երկրորդական նախադասության բնույթը, ստորադասական և համադասական բարդ նախադասությունների կառուցվածքը և այլն:

Վ. Առաքելյանի գիտական գործունեության մեջ պրոֆ. Է. Բ. Աղայանը մի առանձին տեղ հատկացրեց դասական հայերենի ուսումնասիրությանը («Գրաբարի հոլովումն ու խոնարհումը» — 1945,

«Գրաբարի նախդիրները» — 1945. «Գրաբարի հատընտիր» — 1946 և այլն): Մեր նախնյաց բառ ու բանի նկատմամբ սերն ու հետաքրքրությունը, — ասում է նա, — բնականաբար, Վ. Առաքելյանին տանելու էր դեպի նույնքան կարևոր մեկ այլ ասպարեզ՝ դեպի հայ մատենագրություն: Այստեղ էլ հորեղբոր կատարածը բարձր գնահատանքի է արժանի: Բավական է միայն նշել, որ նա աշխարհաբար է թարգմանել, ծանոթագրել ու հրատարակել Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմությունը», Գանձակեցու «Հայոց պատմությունը», Խորենացու, Բյուզանդի, Լեոյիշի և մյուսների երկերի աշխարհաբար թարգմանությունների մեջ կատարել բանասիրական-մատենագիտական բազմաթիվ ճշգրտումներ:

Վ. Առաքելյանը մեծ ծառայություն է մատուցել նաև Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում ստեղծվող ժամանակակից հայերենի բացատրական բազմահատոր նոր բառարանի կազմության գործին: Բառարանի երկրորդ հատորը, որ շուտով կդրվի ընթերցողի սեղանին, նրա հեղինակածն է (120 հեղինակային մամուլ, շուրջ 4800 մեքենագիր էջ): Վ. Առաքելյանը նաև այն առաջիններից մեկն է, ովքեր հայ իրականության մեջ հատուկ քննության առարկա դարձրին գեղարվեստական գրականության լեզուն և ոճը («Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճաբանական առանձնահատկությունները» — 1954, վաղուց ավարտված, սակայն տակավին անտիպ՝ «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը», նույն բազում այն հոդված-ուսումնասիրությունները, որոնք տպագրված են գիտական կամ գրական պարբերականներում):

Իր զեկուցման վերջում պրոֆ. Է. Բ. Աղայանն ասաց.

— Վարագ Առաքելյանը 80 տարեկան է, հայագիտության մեջ նա արդեն ասել է իր ուրույն ու ծանրակշիռ խոսքը, սակայն դեռ շատ հետաքրքրական ծրագրեր ու մտահղացումներ ունի, որոնց իրականա-

ցումը, անշուշտ, կլինի սովետահայ բանասիրության մեր առաջընթացի արտահայտություններից մեկը: Ցանկանք մերան երկար տարիների կյանք և ստեղծագործական մտածողություններ:

Ենթադրյալ 80 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակի կապակցությամբ հոբելյարին ողջույնի ուղերձներ հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ մաթեմատիկայի և ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ինչպես նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի մի շարք ինստիտուտների ու հիմնարկների,

Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի և Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտների հայոց լեզվի ամբիոնների կողմից: Վ. Առաքելյանին ողջունեցին նաև սփյուռքահայ անվանի գրող և բանասեր Հ. Սիրունի, գրականագետ Գ. Ստեփանյանը, հայրենակիցների անունից՝ Եղովյանի կոլտնտեսության մաթեմատիկայի Զ. Զաքարյանը:

Վերջում շնորհակալական ջերմ խոսք ասաց հոբելյարը:

Հ. Գ. ՀԱՈՐԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Հունգարահայ գաղութի պատմության հարցերը, նրա նշանավոր գործիչների կյանքն ու հասարակական-քաղաքական գործունեությունը վերջին տարիներին մեծ հետաքրքրություն են առաջացրել հունգարացի մի շարք հետազոտողների շրջանում: Դ. Կորբուլին, Բ. Բուզվին և այլ ուսումնասիրողներ իրենց անխոնջ պրպտումներով ի մի են ամփոփել հունգարահայ գաղութի ու պատմության շուրջ իրենց կատարած գիտապատմական պրպտումները և պատրաստել մի շարք հոդվածներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Նրանք մասնավորապես ուսումնասիրել են հունգարահայ գաղութի սկզբնավորման հետ կապված հարցերը (տե՛ս «Լրաբեր», 1970, № 7, էջ 97—99), գիտական շրջանառության մեջ են դրել հունգարերեն հրատարակված ու հայ գիտնականներին անհայտ մնացած առանձին հրատարակություններ (տե՛ս «Լրաբեր», 1970, № 9, էջ 95—99), հունգարահայ բժիշկների գործունեությունն ու նրանց դերը բժշկության պատմության մեջ թեման (տե՛ս «Լրաբեր», 1970, № 10, էջ 94—102), ինչպես և

առանձին լրագրային հոդվածներ են նվիրել հայտնի մանկավարժ, «Արմենիա» պարբերականի խմբագիր Քրիստափոր Սոնկոթին և այլն:

Դ. Կորբուլին անցած տարի «Հայ ընտանիք» պարբերականի 5—6-րդ համարներում հրատարակել է նաև մի ընդարձակ ուսումնասիրություն՝ նվիրված այն հայ գործիչներին, որոնց անուններով փողոցներ են կոչվել Բուդապեշտում՝ մրաժամանակ համառոտակի տալով հունգարահայ այդ գործիչների ու նրանց զերգաստանների անցած ուղին (Հայկական փողոց, Ավետիքներ, Պոկտանֆի, Ճեյ Հովհաննեսի, Չիրի Գրիգորի, Դանիելի, Տոնկի Աբրահամ անունները կրող փողոցներ և այլն): Նա ի մի է ամփոփել նաև գործող մի շարք հունգարահայերի մասին կենսագրական բառարաններում տրված նյութերը, առանձին հոդված է նվիրել հայկական թեմատիկայով դրոշմանիշներին՝ ներառյալ մինչև մեր օրերը:

Հունգարահայությանը նվիրված իրենց մի շարք հոդվածները հունգարացի գիտնականները տրամադրել են «Լրաբեր» խմբագրությանը: